ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի ապրիլի 29-ին:

Նիստին մասնակցել են մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի 8 անդամներից 7-ը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Լ. Սեյրանյան):
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. ԱՈՒՊ-ների ամփոփման շուրջ իրականացվող նախնական աշխատանքներ:
4. Դաստիարակների հետ «Մասնագիտական այրման կանխարգելում և հուզական ռեսուրսների վերականգնում» թեմայով թրեյնինգի պլանավորում:
5. Մայիս ամսվա ընթացքում պլանավորված միջոցառումների ներկայացում և աջակցության կազմակերպում:

Լսեցին՝

1. Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի ղեկավար՝ Լ. Սեյրանյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 5 հարցից:

Լսեցին՝

2. Մասնախմբի ղեկավար Լ. Սեյրանյանը զեկուցեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին՝ նշելով, որ ծնողների հետ իրականացվել է «Ծնողավարության հմտությունների զարգացում» թեմայով դասընթաց, որը դրական արձագանք է ստացել ծնողների կողմից և վերջիններս առաջրկել են նմանատիպ դասընթացներն իրականացնել ավելի հաճախ: Նշվեց, որ դասընթացն իրականացվել է փոքր խմբերով ինչը հնարավորություն է տվել ապահովել անհատական մոտեցում և գործնական քննարկումներ յուրաքանչյուր մասնակցի համար: Թրեյնինգի ընթացքում շեշտադրվել են երեխայի կարիքների ճանաչման, դրական ծնողավարության մեթոդների և սեփական ռեսուրսների քարտեզագրման հմտությունների ձևավորումը: Մասնակիցների կողմից ստացված հետադարձ կապը փաստում է, որ նմանատիպ ձևաչափով աշխատանքը նպաստել է նրանց ինքնավստահության բարձրացմանը և երեխաների հետ առավել ներդաշնակ հարաբերությունների ձևավորմանը:

Լսեցին՝

3. Առաջարկվեց ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփման գործընթացին նախապատրաստվելու նպատակով իրականացնել սովորողների ԱՈՒՊ-ների համալիր վերլուծություն՝ առանձնացնելով արձանագրված ձեռքբերումները, առկա դժվարություններն ու բացթողումները, ինչպես նաև գնահատելով նախապես սահմանված նպատակների

իրականացման մակարդակը՝ ապահովելով ԱՈՒՊ-ների տարեվերջյան ամփոփման արդյունավետ կազմակերպում:

Լսեցին՝

4. Մասնախմբի ղեկավար Լ. Սեյրանյանը հիշեցրեց, որ դաստիարակների համար մայիսի վերջին նախատեսված է իրականացնել «Մասնագիտական այրման կանխարգելում» թեմայով դասընթաց, որի նախապատրաստական աշխատանքներն արդեն անհրաժեշտ է մեկնարկել: Նշեց, որ այս անգամ ևս դասընթացն իրականացվելու է հենց իր կողմից:

Լսեցին՝

5. Մասնախմբի ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց մայիս ամսվա ընթացքում պլանավորված միջոցառումները և կարևորեց մասնախմբի անդամների գործուն աջակցությունը դրանց կազմակերպման գործընթացում:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի 2026 թվականի մարտի 27-ի նիստի օրակարգը:
2. Ի գիտություն ընդունել մասնախմբի ղեկավարի կողմից նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկույցը՝ արձանագրելով, որ ծնողների հետ փոքր խմբերով, գործնական քննարկումների և անհատական մոտեցման մեթոդներով իրականացված «Ծնողավարության հմտությունների զարգացում» թեմայով դասընթացը եղել է արդյունավետ և գոհացնող:
3. Ուսումնական տարվա ավարտին և ԱՈՒՊ-ների ամփոփման գործընթացին նախապատրաստվելու նպատակով մասնախմբի անդամներին հանձնարարել իրականացնել իրենց կողմից աջակցություն ստացող սովորողների ԱՈՒՊ-ների վերլուծություն՝ անդրադառնալով արձանագրված ձեռքբերումներին, առկա բացթողումներին և նախապես սահմանված նպատակների իրականացման աստիճանին:
4. Հաստատել դաստիարակների համար նախատեսված թրեյնինգի պլանը: Լ.Սեյրանյանին հանձնարարել մեկնարկել անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները:
5. Ապահովել մասնախմբի անդամների ակտիվ մասնակցությունը և աջակցությունը մայիս ամսվա միջոցառումների իրականացման գործընթացում:

Մասնախմբի ղեկավար՝ **Լ. Սեյրանյան**

Քարտուղար՝ **Գ. Եսայան**

06.05.2026